ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 ապրիլի Շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

59
(2725)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ՝ ՍՏՈՐԱԳՐԵՆ ԿԱՄ ՄԵՐԺԵՆ

ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը վերջին օրերին պարբերաբար «սպառնում է» ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանին պաշտոնանկ անել: Նա երեկ հայտարարել է, թե արդեն հավաքել է բավարար ստորագրություններ ու Թովմասյանի հարցը ներկայացրել ՔՊ խմբակցության քննարկմանը:

Նկատենք, որ Աղազարյանն իր այս մտադրության մասին առաջին անգամ ակնարկել էր դեռեւս ապրիլի 4-ին՝ ՄԻՊ թեկնածուի հարցով հանձնաժողովի նիստից առաջ՝ նիստը դեռ չսկսված:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, սակայն, այս ծրագրի հետեւում իրականում կանգնած է ՔՊ վերնախավը, մասնավորապես՝ քարտուղար Արթուր Հովհաննիսյանը եւ ՊՆ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, որոնք, օգտագործելով Աղազարյանին, ցանկանում են ԱԺ հանձնաժողովի միակ ընդդիմադիր նախագահից ազատվել:

Հենց նրանք էլ Աղազարյանին հրահանգել են պաշտոնանկության գործընթաց սկսել, անգամ Աղազարյանին ասում են, թե ԱԺ ամբիոնից կամ լրատվամիջոցների հետ զրույցում ինչ խոսի, ինչ հայտարարություններ անի:

Կարելի է ասել՝ այս դեպքում Հովիկ Աղազարյանն ընդամենը «խաղալիք է» ընդդիմադիր պաշտոնյային պաշտոնանկ անելու ծրագիրն իրականացնելու համար:

Տեղեկացանք, որ անգամ ՔՊ-ականների համար է անսպասելի եղել Աղազարյանի այս նախաձեռնությունը, քանի որ սովորաբար նա առանձնապես չի էլ հետաքրքրվում ներքաղաքական նման հարցերով, ուր մնաց՝ նման նախաձեռնությամբ հանդես գար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ չնայած Անդրանիկ Քոչարյանն ու Արթուր Հովհաննիսյանն ամենօրյա ռեժիմով աշխատում են ՔՊ-ականների հետ, որպեսզի միանան Աղազարյանի նախաձեռնությանը, բայց երեկվա դրությամբ կեսից ավելին հրաժարվել էին ստորագրել:

Բոլորը սպասում են Նիկոլ Փաշինյանի հրահանգին՝ ստորագրել, թե մերժել Աղազարյանին:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ապրիլի 18-ին Ազգային ժողովում անդրադարձել էր մոտ երկու տարվա վաղեմության մի միջադեպի, երբ 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական շրջանում իր մասնակցությամբ ձայնագրություն էր հրապարակել Սերժ Սարգսյանը: Նա մեղադրել էր «Իմ քայլը» խմբակցության նախկին պատգամավորի՝ այս ձայնագրությունը հրապարակելու համար, սակայն անուն չէր նշել: «Հիշում եք՝ ընտրություններից առաջ Սերժ Սարգսյանն իմ մասնակցությամբ ձայնագրություն հրապարակեց: Ի միջի այլոց, ոչ ոք չանդրադարձավ, թե ով է ձայնագրել դա եւ ինչպես: Կարո՞ղ է այդ մարդը նախկինում մեր խմբակցության անդամ է եղել, հիմա էլ՝ ուրիշ խմբակցության»: Արդեն դրանից հետո Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ» թերթում մի հոդված է հրապարակվում, որտեղ տրվում է «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանի անունը: Երեկ արդեն Ազգային ժողովում «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը ելույթ ունեցավ եւ բացահայտեց, թե երբ է արվել այդ ձայնագրությունը՝ վերջ դնելով բոլոր խոսակցություններին: «Ինչպես ասել էր Արմեն Աշոտյանը, այդ ձայնագրությունն արվել է Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հետ հանդիպման ժամանակ»:

Կալանքի տակ գտնվող ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի գործը քննելու է նախկին դատախազ դատավորը: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, թե ով է քննելու Արցախի ՊԲ նախկին հրամանատար Միքայել Արզումանյանի գործը: Վերջինս քննելու է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վարդգես Սարգսյանը, որը 2022 թվականին ազատվել էր գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունից, որտեղ ավագ դատախազ էր, եւ հետագայում նշանակվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր: Հիշեցնենք, որ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել էր Քննչական կոմիտեի ներկայացրած միջնորդությունը եւ 2 ամսով երկարեցրել Արզումանյանի կալանքը: Արցախի ՊԲ նախկին հրամանատար, Արցախի նախագահի խորհրդական Միքայել Արզումանյանին մեղադրանք է ներկայացվել 2020 թվականի արցախյան պատերազմի ընթացքում ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող «Արեգա» բարձունքը եւ հարակից մարտական դիրքերն ազատագրած անձնակազմին «նահանջ» հրաման տալու համար: Արզումանյանը կալանավորվել էր նախորդ տարվա սեպտեմբերի 1-ին եւ մինչ օրս մնում է կալանքի տակ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ՀՀ մի շարք պաշտոնյաների դիմումներ է ուղարկել եւ կոնկրետ հարցադրումներ արել այն մասին, որ անհամապատասխանություն ու անճշտություն կա իրենց կողմից ներկայացված հայտարարագրերում, եւ իրենց գործունեության հետ կապված պարզաբանումներ է պահանջել: Հիշեցնենք, որ դեռեւս 2022 թվականի նոյեմբերի 22-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն արդեն դիմում է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը, որպեսզի նրանց օպերատիվ հետախուզական խումբը ստուգի բոլոր պետական պաշտոնյաների գույքը եւ պարզի, օրինակ, նրանք ունեն արդյոք բիզնես, անշարժ կամ շարժական գույք, որը չեն հայտարարագրել, կամ արդյոք վարում են մի մեքենա, որը հայտարարագրում ներկայացված չէ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տվել է մեծ թվով պետական պաշտոնյաների անուններ՝ ՀՀ վարչապետ, փոխվարչապետներ, ՀՀ նախագահ, ԱԺ նախագահ, պատգամավորներ եւ այսպես շարունակ: Ստացվում է՝ այս գործընթացից անցել է 5 ամիս, սակայն մինչ օրս հանձնաժողովը կոռուպցիայի բացահայտման գործում դեռեւս զբաղված է թղթաբանությամբ:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CPC ARMENIA

ՈՒՄ ԾՐԱԳՐԵՐՆ ԵՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

ԱՆԱԽԱԴԵՊ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ Է

Ազգային ժողովում ապրիլի 20-ին հերթական խայտառակ միջադեպն արձանագրվեց: ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանը որոշեց քաղաքական ակցիա իրականացնել խորհրդարանի ամբիոնի մոտ՝ խոսելով այս իշխանության վարած քաղաքականության հետեւանքով առաջացած անվտանգային խնդիրների մասին: Ընդդիմադիր մյուս պատգամավորները եւս միացան Թագուհի Թովմասյանի ակցիային, ինչից հետո, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ուղիղ հրահանգով, անվտանգության աշխատակիցները բռնի ուժով, քաշքշելով, աղօրինաբար ընդդիմադիր պատգամավորներին հեռացրին ԱԺ նիստերի դահլիճից եւ թույլ չէին տալիս ներս մտնել, մասնակցել նիստին:

«Ժողովուրդ» օրաթերթը մշադեպի մասին զրուցել է ԱԺ նախկին պատգամավոր Արման Աբովյանի հետ:

-Պարոն Աբովյան, որպես նախկին պատգամավոր՝ ի՞նչ գնահատական կտաք այս միջադեպին:

-Ես ինչ որակավորում էլ տամ, անվանեմ այդ միջադեպը ապօրինություն կամ օրենքի խախտում, դա չի արտացոլում այն իրավիճակը, ինչը կատարվեց ԱԺ-ում: Գործ ունենք «բեսպրեդելի» հետ, կապ չունի՝ ընդդիմադիր պատգամավոր է, թե իշխանական:

Հիմա Ազգային ժողովը փաստացի դարձել է մի մարմին, որը չի կատարում իր գործառույթները, դարձել է հիմնարկ. տպավորություն է, որ ԱԺ ղեկավարությունը կարծում է, թե պատգամավորներն իրենց աշխատողներն են:

-Ընդ որում՝ այստեղ նաեւ կոպիտ խախտում կա այն առումով, որ անվտանգության աշխատակիցը որեւէ իրավունք չունի պատգամավորին հեռացնելու նիստերի դահլիճից, այն էլ՝ բռնի ուժով:

-Այո, ոչ ոք, այդ թվում՝ ԱԺ նախագահը, իրավունք չունի պատգամավորներին հեռացնելու դահլիճից. նույն հաջողությամբ կարող են հրահանգել ծեծել պատգամավորին: Առհասարակ, այն, ինչ կատարվեց եւ կատարվում է Ազգային ժողովում, ցույց է տալիս մեր երկրում տիրող իրավիճակի ողջ աբսուրդը, կազմաքանդումը:

-Պարոն Աբովյան, ուշագրավ է, որ երբ գործող իշխանությունն էր ընդդիմություն, նույն Լենա Նազարյանն ու Արարատ Միրզոյանը գունավոր ծուխով ակցիա էին իրականացնում, որեւէ մեկը չէր խոչընդոտում նրանց ակցիային: Ստացվում է՝ իրենց այն ժամանակ կարելի էր ակցիաներ անել, իսկ իրենց ժողովրդավարության բաստիոն հռչակած իշխանությունները հիմա արգելում են անգամ քաղաքական ակցիաներ իրականացնել:

-Սա միտումնավոր գործողություն էր, որպեսզի պարլամենտարիզմի ինստիտուտը Հայաստանում այնքան վարկաբեկեն, որպեսզի դառնա անիմաստ ու շինծու մի կառույց, որը սպասարկելու է բացառապես իշխանությունների շահերն ու հետաքրքրությունները. սա աննկարագրելի խայտառակություն է, բայց այն նոր չէ. այդ խայտառակությունը սկսվել է այս խորհրդարանի ձեւավորման հենց հաջորդ օրը: Երկրի կառավարման ինստիտուտն առհասարակ ոչնչացրել են այս իշխանությունները, ոնց որ իրենց «դուքյանը» լինի, այս երկիրը դարձրել են իրենց ծրագրերը սպասարկող հիմնարկ: Ժամանակը ցույց կտա՝ թե ում ծրագրերն են այս իշխանությունները սպասարկում: Կարեւոր է հասկանալ նաեւ, որ եթե ԱԺ պատգամավորների հանդեպ նման կերպ են վարվում, ապա հասարակ քաղաքացին ինքն էլ ենթագիտակցորեն հասկանում է, որ ոչնչով պաշտպանված չէ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՄԻՋԱԴԵՊ

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԴԻՄԵԼ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանը վստահեցրել է, որ ԱԺ նախագահի՝ ընդդիմադիր պատգամավորներին նիստերի դահլիճից դուրս հանելու հրամանն աղօրինի էր, եւ նա պատրաստվում է դիմումներ ներկայացնել իրավապահ կառույցներին, որպեսզի մեղավորները քրեական պատասխանատվության ենթարկվեն:

Թովմասյանն իր որոշման մասին հայտնել է խմբակցության հրավիրած ասուլիսի ժամանակ՝ անդրադառնալով խորհրդարանում տեղի ունեցած միջադեպին:

«Ես հիմա աշխատում եմ դիմումների վրա եւ ուղարկելու եմ բոլոր ուժային կառույցներին, որպեսզի ապօրինություններ թույլ տված մարդիկ քրեական պատասխանատվության ենթարկվեն:

Մենք չենք կարող հանդուրժել, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ԱԺ-ն դարձնի իրենց սեփական օբյեկտը: Չի լինելու նման բան: Երեկ նրանք սպառել են իրենց ստելու լիմիտը»,- ասաց Թովմասյանը: Նա ընդգծեց, որ տարբեր խորհրդարաններում վիճաբանություններ, տարաձայնություններ լինում են, սակայն հնարավոր չէ այնտեղ տեսնել, որ անվտանգության աշխատակիցներն ագրեսիվ կերպով քաշքշեն պատգամավորներին, այն էլ՝ ընդմիջման ժամանակ:

Թովմասյանն այդ միջադեպը խայտառակություն որակեց: «Հայտարարում եմ, որ ԱԺ նախագահի՝ մեզ դահլիճից դուրս հրավիրելու հրամանը միանգամայն ապօրինի էր այն դեպքում, երբ հենց ինքն ընդմիջում հայտարարեց:

Նշեմ նաեւ, որ ԱԺ նախագահի հրամանը կատարողներն իրավունք չունեին որեւէ կերպ խոչընդոտելու պատգամավորների աշխատանքը:

Բոլոր օրենքներով գրված է, որ անվտանգության աշխատակիցները պետք է չեզոքացնեն վտանգը»,- ասաց Թովմասյանը:

ԿՐԿԻՆ ԳՈՒՄԱՐ Է ՊԵՏՔ

Կառավարությունն իր երեկվա նիստում վերաբաշխում կատարեց 2023 թվականի բյուջեի նախագծում: Մասնավորապես, կառավարության պահուստային ֆոնդից 33 մլն 716 հազար դրամ հատկացվեց ԿԳՄՍ նախարարությանը: Այդ գումարն անհրաժեշտ է Երեւանում կայանալիք ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնությունը պատշաճ ձեւով կազմակերպելու եւ իրականացնելու համար: Ինչպես հայտնի է, Երեւանում ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնության կազմակերպման եւ անցկացման ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպված մրցույթի հաղթող է ճանաչվել «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ն, որն առաջարկել է 1,16 մլրդ դրամ գնային առաջարկ, եւ կնքվել է պայմանագիր: Առաջնության կազմակերպման գործընթացի շրջանակում առաջացել է նոր ծառայությունների անհրաժեշտություն, օրինակ՝ «Կիլիկիա» մարզադահլիճի մասնակի բրենդավորում (մարզումային դահլիճի ֆասադի ճակատային մասի, մուտքի դռների եւ ներսի բրենդավորում), բրենդային այլ պարագաների պատրաստում, այդ թվում՝ բրենդային պայուսակների պատրաստում (750 հատ), բրենդային ջրաման (750 հատ), բրենդային նոթատետր (750 հատ), բրենդային գրիչ (750 հատ), կրծքանշան (58 մմ 375 հատ, 44 մմ 375 հատ, 30 մմ 40 հատ): Այդ ծառայությունների համար կպահանջվի եւս 33 մլն 716 հազար դրամ գումար: Նշենք, որ հենց «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ի տնօրենն է բարձրացրել լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության հարցը: Հավելենք, որ «Բեգրաունդ Փրոդաքշն» ՍՊԸ-ն գործունեություն սկսել է ծավալել 2018-ի հեղափոխությունից հետո: Հիմնադիր տնօրենը Արմեն Սարգսյանն է. վերջինս 2021 թվականի դեկտեմբերի 2-ին նշանակվել էր Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանի օգնական, Վահագն Խաչատուրյանի՝ նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո՝ 2022 թ. մարտի 18-ին, ազատվել է աշխատանքից: Այժմ միայն Background Production-ի հիմնադիր գործադիր տնօրենն է:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

34,2 մլն դրամ կհատկացվի 44-օրյա պատերազմում անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրման համար: Այս որոշումն իրականացնելու համար վերաբաշխում կկատարվի 2023-ի բյուջեի մասին օրենքում: Զինծառայողի ընտանիքին տրամադրվող սոցիալական աջակցության ամսական չափը կազմում է 300.000 դրամ: Այն տրամադրվում է միջոցառումը հաստատելու ամսվանից, սակայն ոչ ավելի, քան մինչեւ անհայտ կորած զինծառայողին դատական կարգով անհայտ բացակայող ճանաչելը: 16.02.2023 դրությամբ դեռեւս անհայտ բացակայող ճանաչելու մասին դատական ակտեր չունեցող թվով 57 անհայտ կորած համարվող զինծառայողների ընտանիքների աջակցության տրամադրումը դադարեցվել է ս.թ. մարտի 1-ից: Աջակցության վճարման ժամկետը երկու ամսով երկարացվելու արդյունքում 57 անհայտ կորած համարվող զինծառայողների ընտանիքներին աջակցություն տրամադրելու միջոցառման ֆինանսավորման համար կպահանջվի լրացուցիչ 34,2 մլն դրամ:

ՆԱԽԱԳԱՀԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը մասնակցել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան հաշվետու ժողովին, որի ընթացքում հանդես է եկել ելույթով:

Իր խոսքում նախագահ Խաչատուրյանն անդրադարձել է Ակադեմիայի եւ գիտահետազոտական ինստիտուտների գործունեության բովանդակությանն ու հիմնադրույթներին, ինչպես նաեւ ակադեմիական ոլորտում իրականացվող բարեփոխումների սկզբունքներին:

Անդրադառնալով Հայաստանում գիտության դերին եւ կարեւորությանը՝ նախագահը, մասնավորապես, նշել է. «Ոչ ոք կասկած չունի, որ Հայաստանի զարգացման ուղին միայն գիտության հնարավորությունների, գիտական ներուժի օգտագործումն է: Կիսում եմ նաեւ այն միտքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բոլոր նախարարները պետք է այստեղ լինեին, քանի որ գիտությունն այսօր առնչվում է բոլորիս հետ, առանց գիտության մենք զարգացում չունենք, մենք այլ ռեսուրս չունենք, քան մարդը: Եթե մենք ուզում ենք աշխարհում ունենալ մեր տեղը, եւ եթե մենք ունենք որոշակի ծրագրեր ու նպատակներ, ապա միայն գիտության շնորհիվ դրանց կարող ենք հասնել:

Ինձ ավելի քիչ է անհանգստացնում ակադեմիայի միավորման-բաժանման հարցը, որովհետեւ լուծումներ կարելի է գտնել: Կարեւորը բովանդակությունն է, ավելի կարեւոր է հասկանալ, թե մենք ինչ ենք ուզում, ինչպիսի գիտություն ենք ուզում, կամ ինչու մեր գիտական արդյունքները մեզ չեն բավարարում»:

Խոսելով գիտության աջակցության ուղղությամբ կառավարության որդեգրած քաղաքականության մասին՝ հանրապետության նախագահը շեշտել է, որ վերջին տարիների թվային ցուցանիշերն ու գիտության զարգացմանն ուղղված պետական ծրագրերի ու ֆինանսական հատկացումների վերլուծությունները վկայում են, որ կառավարության համար գիտությունը ոլորտային առաջնահերթությունների շարքում է:

Իր ելույթում Վահագն Խաչատուրյանն ընդգծել է, որ գիտական հանրությունը եւ կառավարությունը պետք է գործեն փոխօգնության եւ արդյունավետության բարձրացման սկզբունքներով: «Մենք 6.8 միլիարդ ունենք հատկացված ռազմաարդյունաբերությանը, եւ եթե այդ գումարի գոնե կեսը իրացվում է, մենք ուրախանում ենք: Ես հիմա էլ ցանկանում եմ խնդրել բոլորիդ աշխատել այդ ուղղությամբ: Եթե կան գաղափարներ, որոնք օգտակար կլինեն Հայաստանի անվտանգության բարձրացմանը, հենց ռազմաարդյունաբերության համալիրին, ապա ռեսուրսը կա ֆինանսական, պետությունն այդ հնարավորությունը տալիս է եւ մեծ ակնկալիքներ ունի հենց գիտությունից»,- ասել է նախագահը:

ԵԼՈՒՅԹ

ՓՈԽԱԴԱՐՁ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Չորրորդ օրն է՝ Ազգային ժողովում քննարկվում է կառավարության նախորդ տարվա ծրագրի կատարողականը, չորրորդ օրն է՝ չի մարում «ներկաներ-նախկիններ» բանավեճը: Երեկվա ելույթներում ընդդիմադիրներն անդրադառնում էին վարչապետի հայտարարությանը՝ առ այն, թե Մադրիդյան սկզբունքներով դեռ 2007-ին Հայաստանը ճանաչել է Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս: Նիկոլ Փաշինյանն այս հայտարարությունը վերջին տասն օրվա ընթացքում երկու անգամ արել է, երեկ էլ՝ վերահաստատել:

«Մենք զուգահեռ իրականություն ենք ստեղծել, ցանկալի իրականություն, որը միջազգային եւ աշխարհաքաղաքական իրականության հետ ոչ մի կապ չի ունեցել», - նշել է վարչապետը:

Դաշնակցությունից Արթուր Խաչատրյանը հայտարարեց. «Հայաստանն ասում է՝ Արցախն ուրեմն պետք է լինի Ադրբեջանի կազմում, Ադրբեջանն ինչի՞ պետք է ասի՝ ոչ. մի՞թե Ադրբեջանն էդքան ախմախ է»:

Խաչատրյանը նաեւ հայտարարեց՝88-ից ի վեր՝ 35 տարվա մեջ, առաջին անգամ Նիկոլ Փաշինյանի կառավարությունն է, որ չի խոսում Արցախի ինքնորոշման իրավունքից՝ հիշեցնելով՝ ինչպես է վերջին ընտրություններից հետո իշխանական կուսակցությունը իր փաստաթղթերում ինքնորոշման իրավունքը փոխարինել Լեռնային Ղարաբաղի հայության անվտանգության եւ իրավունքների հասցեագրման, որը պիտի երաշխավորվի միջազգային մեխանիզմով:

«Քաղաքացիական պայմանագրից» Մաթեւոս Ասատրյանն արձագանքեց. «Ունեցել եք 20 տարի առնվազն շահեկան դիրքում, ես հարց եմ տալիս՝ ինչի՞ չորոշեցիք Արցախի ճակատագիրը, ինչի՞ թողեցիք մեր եւ մեր երեխաների վզին, հիմա ո՞ւմ վզին եք ուզում թողնել: Մենք խոսում ենք ընդհանուր մի հայրենիքի մասին, որը ժառանգություն ենք ստացել, այո՛, ձեզանից»:

ՔՊ-ական Ասատրյանի կարծիքով՝ արտաքին թշնամին ներսից է ուտում: Մինչ ընդդիմադիրները կարծում են, որ Փաշինյանի թիմը սեւացնում է անցյալը՝ ներկան լուսավոր ցույց տալու համար, իշխանականներն իրենց ձեռքբերումներն էին թվարկում, մասնավորապես՝ անվտանգության ոլորտում: Սերգեյ Բագրատյանը կարծում է՝ դրանք ադրբեջանցիներին էլ են զարմացրել:

«Առաջին անգամը լինելով՝մենք մեկ միլիարդից ավելի պաշտպանական գերատեսչությանը միջոցներ ենք հատկացնում. պատկերացրե՛ք, որ Ադրբեջանն այդ մասին զարմանքով է արտահայտվում, որ Հայաստանը ոնց կարող է միլիարդից ավելի պաշտպանությանը միջոց հատկացնել: Եվ կարծում եմ՝ մենք, այո, այդ բալանսը կմոտարկենք, եւ խաղաղության կարեւորագույն բաղադրիչը ռազմական գերազանցություն թույլ չտալն է», - ասաց Բագրատյանը:

Իսկ ըստ Ագնեսա Խամոյանի՝ իշխանությունն ու Նիկոլ Փաշինյանը հիմա էլ շարունակում են թաքցնել բանակցային գործընթացը հայ ժողովրդից:

«Դուք չորս անգամ Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի տեքստ եք փոխանակվել, բայց ԱԺ պատգամավորը չորս ամիս է՝ չի կարողանում ծանոթանալ այդ տեքստին ու կետերին,-ասաց Ագնեսա Խամոյանը՝դիմելով դահլիճում նստած Փաշինյանին եւ հավելելով:- Փաստորեն, համ այս երկրի դատախազն եք, համ ԱԳ նախարարն եք, համ ԱԽ քարտուղարն եք. Դուք էս երկրի ամե՞ն ինչն եք»:

Խաչատուր Սուքիասյանն անդրադարձավ Ագնեսա Խամոյանին. «Հիմա գալիս է տիկին Խամոյանը, ասում է՝ «գիտեք ինչ, էսպես ասիք, գնացիք եկաք, ու այդ օրը արտաքին գործերի նախարարը...»... Արտաքին գործերի նախարարությունը ՀՀ արտաքին գերատեսչությունն է, բոլոր տեղեկություններն այլ երկրների հետ, այն փաստաթղթերը, որոնք Հայաստանից դուրս կնքվում են, կքնվում են ԱԳՆ-ում: Էդ ի՞նչ արհամարհական վեարբերմունք է, թե՞ պետք է լրագրողական ինչ-որ կայքից տեղեկություն վերցնեն, ասեն՝ «նայե՛ք՝ էս է, տեսե՛ք՝ ինչ էին ասում, տեսե՛ք»: Իսկ ես կարո՞ղ եմ հարց տալ տիկին Խամոյանին. 2-րդ եւ 3-րդ նախագահները լավ ադրբեջաներեն էին խոսում Ադրբեջանի նախագահի հետ, ժպտում էին, մի հատ կարո՞ղ եմ իմանալ՝էդ ինչ էին խոսում: Էդ ի՞նչ ձեւ է, մի հատ էլ երկրին, վարչապետին ասում է. «էդ ի՞նչ էիք բանակցում»: Ես էլ ասում եմ՝ որ ադրբեջաներեն իրար հետ խոսում էին, հիմա թող ասեն՝ինչ են խոսել իր հետ ադրբեջաներեն 2-րդ եւ 3-րդ նախագահները. երկուսն էլ ադրբեջաներեն էին խոսում. հիմա ես էդ հարցն եմ տալիս տիկին Խամոյանին»:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ

Ապրիլի 20-ին հեռախոսազրույց են ունեցել ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը եւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, որի ընթացքում քննարկվել է վերջինիս պաշտոնական այցը Չինաստան: Այս մասին հայտարարություն է տարածել Սպիտակ տունը:

Հիշեցնենք, որ Չինաստան վերջին այցի ընթացքում նախագահ Մակրոնի հայտարարությունները քննադատության էին արժանացել ԵՄ երկրների եւ ԱՄՆ-ի կողմից: Մակրոնը Չինաստանի նախագահ Սիին կոչ էր արել օգնել կանգնեցնել Ռուսաստանի հարձակումը Ուկրաինայի վրա եւ «բոլոր կողմերին բերել բանակցային սեղանի շուրջ»: Այցից հետո Politico-ին տված հարցազրույցում Ֆրանսիայի նախագահը նշել էր, որ Եվրոպան պետք է նվազեցնի կախվածությունը ԱՄՆ-ից եւ չխառնվի ԱՄՆ-Չինաստան կոնֆլիկտին Թայվանի պատճառով:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՐՑ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի համար շարունակում է մեծ նշանակություն ունենալ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բռնությունների դադարեցումը, հատկապես՝ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում: Այդ մասին հայտնել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակի առաջին տեղակալ Վեդանտ Պատելը:

«Նա հնարավորություն է ունեցել մի քանի անգամ հանդիպելու այս երկրների ղեկավարների հետ Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում: Մենք շարունակում ենք այդ հարցում մեծապես ներգրավված մնալ: Այդ հարցում պրն. Բոնոն (խմբ.՝Լուիս Բոնո՝Կովկասյան բանակցությունների հարցերով ԱՄՆ պետքարտուղարության ավագ խորհրդական) շարունակում է ներգրավված մնալ՝ այս գերատեսչությունում մյուսների հետ միասին»,-ասել է Պատելը:

Դիվանագետը նշել է, որ առայժմ այլ մեկնաբանություն չունի՝ կապված Լուիս Բոնոյի՝Հարավային Կովկաս այցի հետ:

Կովկասյան բանակցությունների հարցերով ԱՄՆ պետքարտուղարության ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Լուիս Բոնոն ապրիլի 14-ից տարածաշրջանում էր: Ապրիլի 20-ին նրան ընդունել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Կողմերը քննարկել են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ երկխոսության միջազգային մեխանիզմի ձեւավորումը, Լաչինի շրջափակման հետեւանքով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամը եւ այլ հարցեր:

ԲԱԶՄԱԴՐՎԱԳ ԴԵՊՔ

ՏԱՍԸ ԱՆՁ ՉԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Ներքին գործերի նախարարության ոստիկանությունը թմրամիջոցների իրացման բազմադրվագ հերթական դեպքն է բացահայտել:

Ինչպես հայտնում է ՆԳՆ ոստիկանությունը, թմրաշղթայի առաջին օղակը ոստիկանների տեսադաշտում հայտնվել է ապրիլի 5-ին: Ոստիկանության Շենգավիթի բաժնի քրեական հետախույզները, իրացնելով օպերատիվ տվյալները, ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու հիմքով ձերբակալել են Երեւանի 25-ամյա մի բնակչի: Ոստիկանության բաժնում նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 0,41 գրամ Մեթամֆետամին տեսակի թմրամիջոց եւ ծալովի դանակ: Դեպքի առթիվ ապրիլի 5-ին քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ձեռնարկված լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում Շենգավիթի բաժնի ծառայողները քննչական բաժնի աշխատակիցների հետ համատեղ պարզել են, որ 25-ամյա երիտասարդին թմրամիջոցն իրացրել է մայրաքաղաքի 56-ամյա մի բնակիչ: Նա ապրիլի 7-ին ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու, օգտագործելու եւ իրացնելու հիմքով ձերբակալվել է:

Ապրիլի 7-ին ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ խուզարկություն է կատարվել Արտաշիսյան փողոցի՝ 56-ամյա տղամարդուն պատկանող տնակում: Հայտնաբերվել են 0,7 գրամ Մեթանֆետամին, 0,75 գրամ Ափիոն եւ 280 մլգ Մեթադոն տեսակի թմրամիջոցներ:

Շարունակելով օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ պարզվել է նաեւ, որ 56-ամյա տղամարդուն թմրամիջոց է իրացրել 41-ամյա մի տղամարդ: Նա ապրիլի 11-ին ապօրինի թմրամիջոց պահելու եւ իրացնելու հիմքով ձերբակալվել է եւ, իր վարած «Ֆոլքսվագեն» մեքենայով եւ ուղեւորներով հանդերձ, տեղափոխվել ոստիկանության Շենգավիթի բաժին: 41-ամյա տղամարդու անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է 6,1 գրամ Մեթամֆետամին, իսկ ուղեւորների մոտից՝ 2,92 գրամ Մարիխուանա եւ մոխրացած հետքերով ծխամորճ:

Իրավապահների միջոցառումներով պարզվել է նաեւ 41-ամյա տղամարդուն թմրանյութեր իրացրած անձի ինքնությունը, որը Երեւանի 56-ամյա մեկ այլ բնակիչ է:

Բացահայտման աշխատանքներին միացել են նաեւ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ ծառայողները:

Ապրիլի 20-ին ՔՈԳՎ եւ Շենգավիթի ոստիկանները ՔԿ ԵՔՔՎ Շենգավիթի քննչական բաժնի ծառայողների հետ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ապօրինի թմրամիջոցներ ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու հիմքով ձերբակալել են 56-ամյա տղամարդուն:

Նույն քրեական վարույթի շրջանակներում խուզարկություն է կատարվել 56-ամյա տղամարդու հետ փոխկապակցված անձի՝ 47-ամյա կնոջ՝ Վաղարշապատում գտնվող բնակարանում: Արդյունքում հայտնաբերվել են 366,78 գրամ Հաշիշ, 89,13 գրամ Ափիոն, 2,11 գրամ Մեթամֆետամին թմրամիջոցներ, 4500 եվրո կեղծ թղթադրամներ, ինչպես եւ թմրամիջոցի հետքերով 3 կշեռք եւ բազմաթիվ կոլբաներ:

Շարունակելով միջոցառումները՝ իրավապահները նույն օրը ապօրինի թմրամիջոցներ ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու հիմքով ձերբակալել են Երեւանի 51-ամյա մի բնակչի, ինչից հետո խուզարկվեց նրա՝ Ֆանարջյան փողոցի բնակելի տան հարակից շինությունը. հայտնաբերվել է 8,38 գրամ Ափիոն տեսակի թմրամիջոց:

Նշված շինության հարակից տարածքում հայտնաբերվել է նաեւ մայրաքաղաքի 48-ամյա մի բնակիչ, որը նույն կասկածանքով ձերբակալվեց: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեցին 0,57 գրամ Մեթամֆետամին, մոխրացված հետքերով կաթուցիչ եւ ծալովի դանակ:

Նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

Ապօրինի թմրաշրջանառությունը, որպես մարդկության առողջության դեմ ուղղված հանցագործություն, չարիք է ամբողջ աշխարհում: Ցավոք, ապօրինի թմրաշրջանառության ծավալները մեծանում են՝ պայմանավորված նաեւ տեխնոլոգիաների զարգացմամբ (հատկապես տելեգրամյան ալիքներով):

«Հորդորում ու պահանջում ենք զերծ մնալ թմրանյութերի օգտագործումից եւ դրանք շրջանառելուց: Թմրամոլության դեմ պայքարը ՆԳՆ ոստիկանության առաջնահերթություններից է, հետեւաբար ամեն օր նոր թափ է ստանում հանցատեսակի դեմ պայքարը եւ առավել պարբերական՝ ապօրինի թմրաշրջանառությանը հակազդելու միջոցառումները»,- ասված է ոստիկանության տարածած հաղորդագրության մեջ:

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ԿԵՂԾ 200-ԴՐԱՄԱՆՈՑՆԵՐ ԵՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների, ինչպես նաեւ ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել են մի խումբ անձանց կողմից իրացնելու նպատակով կեղծ արժույթներ պատրաստելու դեպքի հանգամանքները. այս մասին հայտնեցին ՀՀ քննչական կոմիտեից:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ երեք անձինք, նախնական համաձայնությամբ, 2023 թվականի մարտի 3-ից 21-ն ընկած ժամանակահատվածում նրանցից մեկին պատկանող, Երեւան քաղաքում գտնվող առանձնատանը պատրաստել են կեղծ արժույթ՝ 200 դրամ անվանական արժեքով կեղծ մետաղադրամներ, որոնք մի քանի այլ անձանց հետ իրացրել են տարբեր վայրերում՝ առեւտրի սրահներում, բենզալցակայաններում:

Նախաքննության ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի եւ ՀՀ ԱԱԾ համապատասխան վարչությունների աշխատակիցների կողմից համատեղ կատարված խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել եւ առգրավվել են կեղծ արժույթը պատրաստելու համար նախատեսված սարքը, ինչպես խոտանված, այնպես էլ պատրաստված կեղծ 200 դրամանոցներ, ինչպես նաեւ ինքնաձիգի փամփշտատուփ եւ 24 փամփուշտ, ոսկու ձուլակտորների համար նախատեսված կաղապարներ, շուրջ 155 գրամ քաշով ոսկյա զարդեր, 4 կիլոգրամ քաշով արծաթի նմանվող զանգված:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ 6 անձի մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարք կատարելու համար:

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է ՎՆԱՍԸ

2023 առաջին եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններում առկա քրեական վարույթներով (նախաձեռնման պահին) արձանագրվել է հանցագործությամբ պետությանը եւ համայնքներին պատճառված նախնական հաշվարկով 17 մլրդ 443 մլն 794 հազար 357 դրամի վնաս: Դրանից 17 մլրդ 374 մլն 223 հազար 844 դրամը պետությանը պատճառված վնասի չափն է, 69 մլն 570 հազար 513 դրամը՝ համայնքներինը: Նշված ժամանակահատվածում արձանագրված վնասից նախաքննության ընթացքում վերականգնվել է 1 մլրդ 388 մլն 244 հազար 343 դրամը, որից 1 մլրդ 326 մլն 753 հազար դրամը՝ պետությանը պատճառված վնասի չափն է, 61 մլն 491 հազար 343 դրամը՝ համայնքներինը (այդ թվում՝ համայնքին է նվիրաբերվել 3 մլն 970 հազար դրամ արժողությամբ հողատարածք, իսկ 3 մլն 667 հազար դրամ արժողությամբ մշակութային արժեքները տրվել են պատասխանատու պահպանության՝ ՀՀ պատմության թանգարանին): Նշված վարույթներով նախաքննության ընթացքում 35 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, արգելանք է դրվել 412 մլն 440 հազար դրամ բանկային հաշիվների, շարժական եւ անշարժ գույքերի վրա, որոնց արժեքը դեռ որոշված չէ:

ԿԱՆԽԵԼ ԵՆ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

Պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը շարունակում է անզիջում պայքարը Հայաստանի Հանրապետության պետական սահմանով ռազմավարական տեսակետից կարեւոր հումքային ապրանքների անօրինական տեղափոխման ուղղությամբ: Օրերս Մաքսանենգության դեմ պայքարի վարչության եւ ՊԵԿ արեւմտյան մաքսատուն վարչության ուղեւորների մաքսային հսկողության բաժնի աշխատակիցները «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության «Զվարթնոց» օդանավակայանի ուղեւորային համալիրի մաքսային հսկողության գոտում համատեղ զննման են ենթարկել Թբիլիսից Երեւան ժամանած Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Դ.Զ.-ին պատկանող ձեռքի ուղեբեռը: Վերջինս մաքսային հսկողության կանաչ ուղին հատելուց հետո ուղեկցվել է տեսազննող սարքի մոտ: Զննվել է տվյալ քաղաքացու մոտ գտնվող պայուսակը: Ուղեւորի մոտ առկա շագանակագույն կտորե ուսապարկում, բացի անձնական օգտագործման իրերից, հայտնաբերվել է 1 կգ քաշով չհայտարարագրված ոսկեգույն մեկ ձուլակտոր, որը դրված է եղել թափանցիկ պոլիէթիլենային տոպրակում՝ ռուսատառ փաստաթղթի հետ միասին: Համաձայն ՌԴ քաղաքացու բանավոր հայտարարության՝ այն հանդիսանում է ոսկյա ձուլակտոր: Զննության արդյունքում նույն ուսապարկում հայտնաբերվել է նաեւ 7 հատ ռուսերեն եւ 4 հատ վրացերեն լրացված փաստաթուղթ, որոնք էլ, ըստ Դ.Զ.-ի հայտարարության, հանդիսանում են հայտնաբերված ձուլակտորի փաստաթղթերը: Փաստի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 292-րդ հոդվածի հատկանիշներով, կազմվել է մաքսանենգության դեպքի վերաբերյալ արձանագրություն, հայտնաբերված ձուլակտորը վերցվել է, իսկ կազմված նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 49 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ԿԲԱՐՁՐԱՆԱ

Կառավարության երեկվա նիստում ընդունվեց ««Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, եւ այն համարվեց անհետաձգելի: Նախագծով առաջարկվում է Քննչական կոմիտեի քննիչներին վճարել ամսական հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով:

Նախագծի ընդունման արդյունքում ՀՀ պետական բյուջեի ծախսերում ակնկալվում է հետեւյալ փոփոխությունը. 2023թ. հունիս-դեկտեմբեր ամիսների համար Քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (ընդհանուր 975 անձ) ամսական դրույքաչափի 92 տոկոսի չափով հավելում նախատեսելու դեպքում նախնական հաշվարկով անհրաժեշտ է շուրջ 3,12 մլրդ դրամ:

ԱՃՈՒՐԴ

Կառավարության երեկվա նիստում պետական գույք օտարելու մասին որոշում կայացվեց: Այս անգամ խոսքը գնում է Դիլիջան քաղաքի Շամախյան փողոց 2/1 հասցեում գտնվող 2977,8 քմ մակերեսով շենք-շինությունների, ինչպես նաեւ դրանց զբաղեցրած, օգտագործման եւ սպասարկման համար հատկացված 0.94 հեկտար մակերեսով հողամասի մասին:

Այն հանդիսանում է պետական սեփականություն, ամրացված է ՀՀ ՏԿԵՆ պետգույքի կառավարման կոմիտեին եւ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված է «Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ գույքն իրենից ներկայացնում է վարչական շենք, որը ներկայումս չի շահագործվում եւ ունի հիմնանորոգման կարիք: Ներկայացված նախագծով առաջարկվում է Դիլիջանի Շամախյան փողոց 2/1 հասցեում գտնվող գույքը ներկայացնել օտարման՝ մրցույթով:

Մրցույթով օտարման ենթակա գույքի վաճառքի նվազագույն գին է սահմանվել գնահատված արժեքի 100 տոկոսի չափը՝ 343,8 մլն դրամը՝ ներառյալ հատկացված հողամասի տվյալ պահին գործող շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը՝ 64 մլն 242 հազար դրամ: Գնորդը պարտավոր է վճարել նաեւ գույքի արժեքի որոշման դիմաց գանձվող գումարը՝ 1 մլն 041 հազար դրամ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՖՈՒՏԲՈԼԸ՝ ԲԱՆԱԿԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Մամուլում բազմաթիվ անդրադարձեր կան բանակում չծառայածների թեմային, թե ինչ զարտուղի ճանապարհներով են նախկինում եւ հիմա ազատվում բանակում ծառայելուց՝ դրանով իսկ հսկայական վնաս հասցնելով երկրի պաշտպանողունակությանը: Պարզվում է՝ բացի կեղծ հիվանդություններից ու խաղամացիություն փոխելուց կամ կրթության անվան տակ բանակից փախչելուց, Հայաստանում գործում է նաեւ բանակից ազատվելու այսպես կոչված «սպորտային մաֆիա»: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, ըստ էության, բանակից ազատվելու հրաշալի վայր է դարձել ֆուտբոլը, մասնավորապես՝ 2019թ.-ից ստեղծված ու մինչ օրս գործող ԲԿՄԱ ակումբում գրանցվելը (Բանակի կենտրոնական մարզական ակումբ):

Մեր խմբագրության հետ կապ հաստատած, բանակային տարիքին մոտեցող ֆուտբոլիստ ունեցող ծնողներից ահազանգում են, որ այդ ակումբը դարձել է էլիտայի երեխաներին բանակից ազատելու վայր, ու զարմանալին այն է, որ այնտեղ գրանցելու հարցերը թողնված են մարդկանց, որոնք կապ չունեն եւ չեն ունեցել բանակի հետ (նկատի ունենք ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանին, ՀՖՖ փոխնախագահ Արմեն Նիկողոսյանին, ում որդին եւս անհայտ պատճառներով ազատվել է բանակից, ՀՖՖ ներկա ղեկավարության մեծագույն մասին, որոնք, չգիտես՝ ինչու, բանակ չեն գնացել, ԲԿՄԱ-ի մարզչական շտաբին եւ այսպես շարունակ):

Մեզ փոխանցեցին, որ բանակի անվան հետ կապվող սույն ակումբի միջոցով բանակից ազատվողների թիվը կարող է հասնել մի քանի տասնյակի: Գործում է երկու թիմ՝ բարձրագույն եւ առաջին խմբերում: Ֆուտբոլային աշխարհը ԲԿՄԱ-ի մասով ուժեղ ցնցում ապրեց, երբ «Փյունիկ» ակումբի սեփականատեր Արթուր Սողոմոնյանն ուղիղ մեղադրանք հնչեցրեց ֆեդերացիայի հասցեին ու, ի թիվս այլի, կասկածի տակ դրեց ԲԿՄԱ ակումբի որոշ խաղացողների համապատասխանելիության բարձր մակարդակին (համադրելով տվյալները՝ մենք պարզեցինք, որ խոսքը ՏԿՆ փոխնախարար Քրիստինե Ղալեչյանի որդու՝ Տիգրան Սարգսյանի մասին է, ում հայրը վերջերս ՀՖՖ գործկոմի անդամ է դարձել ու համարվում է Արմեն Մելիքբեկյանի մտերիմներից):

Համարում ենք, որ ՀՀ իրավապահ մարմինները պարտավոր են առնվազն քրեական գործի հարուցման համար նյութեր նախապատրաստել եւ քննել ՀՖՖ կոչվող հասարակական կազմակերպության կողմից հնարավոր չարաշահումների մասին հրապարակումները: Երեւույթը ուղղակիորեն վտանգում է Հայաստանի պաշտպանողունակությունը, ուստի ուժային կառույցների ուշադրությունն ենք հրավիրում տվյալ ակումբում հայտնված խաղացողների ընտրության ընթացակարգի, ընդգրկված ֆուտբոլիստների համապատասխանության հարցին: Հատկանշական է, որ, ըստ էության, բանակից ազատված այս թիմում հանդես եկող խաղացողների գերակշիռ մասը նույնիսկ չի հրավիրվում Հայաստանի ազգային հավաքական. ազգային թիմի վերջին պաշտոնական խաղերում ընդհանուր հայտացուցակում էր միայն ԲԿՄԱ-ի դարպասապահը, որը դաշտ դուրս չեկավ: Որպես ուժային կառույցներին «օգնություն»՝ ներկայացնում ենք ԲԿՄԱ ակումբում ընդգրկված առաջին զորակոչի այն ֆուտբոլիստների անունները, որոնք «ծառայությունից» հետո ֆուտբոլից հեռացել են՝ չշարունակելով զբաղվել սպորտով.

Արամ Քոլոզյան,
Արսեն Գյուլամբարյան,
Արման Քիշմիշյան,
Վրեժ Մարտիրոսյան,
Ստեփան Սահրադյան,
Ռադիկ Սարգսյան,
Պետրոս Մանուկյան,
Մամիկոն Դերմենջյան,
Արշակ Պողոսյան:

Ի դեպ, 9 հոգին դուրս են մնացել ընտրված 23 հոգուց, ինչը նշանակում է, որ կատարվել է, մեղմ ասած, շատ վատ սելեկցիա, էլ չենք խոսում, որ մնացած ֆուտբոլիստների շոշափելի հատվածը եւս մեկ-երկու տարուց դադարելու է ֆուտբոլ խաղալը պրոֆեսիոնալ մակարդակով: Մենք դեռեւս չենք խոսում, թե ինչ նպատակ ունի բանակ չզորակոչել ու «փափուկ» ծառայություն ապահովել այնպիսի երիտասարդների, որոնք նույնիսկ չեն համապատասխանում բարձրագույն խմբում խաղալու պահանջներին, բայց գրանցված են ԲԿՄԱ-ում, չեն հրավիրվում ազգային թիմ: Սույն թեման, ինչպես նաեւ ՀՖՖ ղեկավարության գործունեությունը շարունակելու է մնալ մեր ուշադրության կենտրոնում, մասնավորապես՝ ղեկավար կազմի որոշ ներկայացուցիչների ընտանիքի անդամների կողմից ձեռք բերված թանկարժեք մեքենայի, սեփական տուն գնելու փաստին կանդրադառնանք շուտով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ

ԱՆԿԱՆԽԻԿ ԵՂԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

««Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի կիրարկումն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կառավարությունն ընդունել է որոշում: Օրենքով սահմանվել են ընտանեկան, սոցիալական նպաստի, ինչպես նաեւ հրատապ օգնության գումարների անկանխիկ եղանակով վճարման համակարգին անցնելն ապահովող հիմնական կարգավորումները:

Մասնավորապես, նոր կարգավորումների համաձայն՝ ընտանեկան եւ սոցիալական նպաստի, ինչպես նաեւ հրատապ օգնության գումարները վճարվում են անկանխիկ եղանակով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված սոցիալական ապահովության հաշվին կամ միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով, բացառությամբ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ 75 տարին լրացած անձանց, որոնց դիմումի հիման վրա՝ կարող է վճարվել կանխիկ կամ անկանխիկ եղանակով: Ըստ այդմ՝ առաջարկվում է ընտանեկան եւ սոցիալական նպաստի, ինչպես նաեւ եռամսյակային հրատապ օգնության գումարների վճարումներին վերաբերող դրույթները համապատասխանեցնել օրենքին: Անկանխիկ վճարման համակարգի ներդրման համար սահմանվել են այն գործողությունները, որոնք կապահովեն փուլային եղանակով 2023թ. հուլիսի 1-ից քաղաքներում եւ 1000-ից ավելի բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերում, իսկ 2024 թ. հունվարի 1-ից՝ մինչեւ 1000 բնակիչ ունեցող գյուղերում անկանխիկ եղանակով վճարումները: Մասնավորապես՝ այն դեպքում, երբ նպաստառուն չի ներկայացնի բանկի ընտրության դիմում, նրա փոխարեն բանկը կընտրի գնահատման համակարգի կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպությունը՝ ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական եւ իրազեկման կենտրոն» հիմնադրամը՝ ծրագրային մոդուլի կիրառմամբ՝ պատահականության սկզբունքով, հաշվի առնելով այդ ամսում տվյալ բնակավայրում անկանխիկ եղանակով նպաստի կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների թվի համամասնությունները՝ ըստ վճարող բանկերի: Ընդ որում, բանկը փոխելու նպատակով նպաստառուն ցանկացած ժամանակ կարող է դիմել Միասնական սոցիալական ծառայության՝ իր բնակության վայրի տարածքային կենտրոն:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ՃՏՊ. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՄԱՐՔ

ՀԱՅՑ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

2022թ-ի հունիսի 7-ին ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահ Առնակ Ավետիսյանը, ընդդեմ «Սահման ԱՊՊԱ» ՍՊԸ-ի, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան գումար բռնագանձելու, պայմանագիրը լուծելու եւ տարածքից վտարելու պահանջներով հայց է ներկայացրել: Հայցադիմումով պետական գույքի կառավարման կոմիտեն դատարանից խնդրել է «Սահման ԱՊՊԱ» ՍՊԸ-ից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 3 միլիոն 791 հազար 259 ՀՀ դրամ գումարի պարտքը, որից մայր գումարը կազմում է 2 միլիոն 125 հազար 391 ՀՀ դրամ, իսկ ապահովագրական ընկերության հետ պետական գույքի կառավարման կոմիտեի կնքած պայմանագրի 6,1 կետի հիմքով հաշվարկված տույժը 2022 թվականի հունիսի 7-ի դրությամբ կազմել է 1 միլիոն 665 հազար 868 դրամ: Հայցադիմումով Պետական գույքի կառավարման կոմիտեն դատարանից խնդրել է լուծել Պետական գույքի կառավարման կոմիտեի եւ «Սահման ԱՊՊԱ» ՍՊ ընկերության միջեւ 2018թ-ի հուլիսի 30-ին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը, ապահովագրական ընկերությանը վտարել ՀՀ Տավուշի մարզի Այրում համայնքի Բագրատաշեն գյուղի 19-րդ փողոցի թիվ 69 հասցեում գտնվող 11.68 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ոչ բնակելի տարածքից, ապահովագրական ընկերությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել նախապես վճարված 153 հազար 760 ՀՀ դրամ պետական տուրքի գումարը: 2020թ-ի հունիսի 22-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Սարգիս Արմենակյանը Դիլիջան քաղաքում կայացած դատական նիստում որոշել է պետական գույքի կառավարման կոմիտեի հայցադիմումը վերադարձնել, եռօրյա ժամկետ տալ հայցադիմումի թերությունները վերացնելու եւ այն կրկին դատարան ներկայացնելու համար:

Պետական գույքի կառավարման կոմիտեն, շտկելով հայցադիմումի թերությունները, այն կրկին ներկայացրել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան, այն ընդունվել է դատարանի վարույթ: 2022թ. նոյեմբերի 22-ին կայացած նիստում դատավոր Սարգիս Արմենակյանը կայացրել է նշված քաղաքացիական հայցով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում. այդ որոշմամբ սահմանել են գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը: 2023թ. փետրվարի 28-ի Իջեւան քաղաքում կայացած դատական նիստում դատավոր Ս. Արմենակյանը որոշել է այդ քաղաքացիական գործով նախնական դատական նիստն ավարտել եւ գործի դատաքննություն նշանակել 2023 թվականի ապրիլի 11-ին: Սույն քաղաքացիական գործով հերթական դատական նիստ է նշանակվել մայիսի 2-ին :

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀԿ-ՆԵՐԸ ԽՍՏՈՐԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ

Մի քանի հասարակական կազմակերպություններ երեկ խորհրդարանում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ հայտարարություն են տարածել, որում ասվում է. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում սովորական երեւույթ են դարձել իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության եւ ընդդիմադիր խմբակցությունների միջեւ լեզվակռիվները, փոխադարձ վիրավորանքները, քաշքռտուքները, ծեծկռտուքը:

Պետության համար ճակատագրական աշխարհաքաղաքական իրավիճակում եւ անվտանգային սպառնալիքների հանդիման՝ հանրության ուշադրության կիզակետում ժողովրդի «ընտրյալների» տհաս, խուլիգանական վարքագիծն է եւ դրա անպատժելիությունը:

Քաղաքական գնահատականների եւ պատասխանատվության բացակայությունը հանգեցնում է նորանոր խայտառակ իրավիճակների եւ դրանց արդարացման: Հանրային դժգոհությունները մնում են անարձագանք, եւ հանդգնորեն շարունակվում է խորհրդարանական «բեսպրեդելը»:

2023 թվականի ապրիլի 20-ին ՀՀ Ազգային ժողովում կրկին տեղի է ունեցել միջադեպ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության, դրա նախագահ Ալեն Սիմոնյանի եւ խորհրդարանական ընդդիմության ու ՀՀ ԱԺ մարդու իրավունքների հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի մասնակցությամբ, որում ներգրավվել են անվտանգության ծառայության աշխատակիցները, հրահանգվել է անջատել եթերը, բռնությամբ դահլիճից հեռացվել են պատգամավորները: Որպես նախկին արարքի իրավական եւ քաղաքական հետեւանքների բացակայության արդյունք՝ ՀՀ ԱԺ նախագահին այս անգամ սպառնացել է «թքել» պատգամավորների վրա:

Մենք՝ ներքոստորագրյալ կազմակերպություններս, խստորեն դատապարտում ենք ՀՀ Ազգային ժողովը էժանագին շոուների կամ «թաղային» հաշվեհարդարների, ատելության տարածման հարթակի վերածող բոլոր քաղաքական գործիչներին եւ նրանց կողմից դրսեւորվող այդպիսի վարքագիծը:

Կրկին պահանջում ենք ԱԺ բոլոր պատգամավորներից եւ, մասնավորապես, քաղաքական մեծամասնությունից ջանքեր գործադրել՝ դատապարտելու եւ բացառելու սեփական կուսակիցների անպատասխանատու վարքագիծը: ՀՀ Ազգային ժողովի յուրաքանչյուր պատգամավոր իր ամենօրյա վարքով, պահվածքով, խոսքով պետք է ապացուցի, որ արժանի է լինելու իր ժողովրդի ընտրյալը:

Կրկին հորդորում ենք ՀՀ Ազգային ժողովին հրատապ ձեւավորել էթիկայի հանձնաժողով եւ քննության առնել ինչպես ԱԺ նախագահիին, այնպես էլ այլ խորհրդարանականներին՝ պատգամավորին անհարիր վարքագիծ դրսեւորելու համար պատասխանատվության ենթարկելու, ընդհուպ՝ հրաժարականի հարցը: Մասնավորապես՝ակնկալում ենք այս ուղղությամբ կոնկրետ քայլեր քաղաքական մեծամասնության կողմից, եթե այն, առհասարակ, զգում է որեւէ պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության եւ նրա քաղաքացիների բարօրության համար:

Իրավապահ մարմիններից եւ, մասնավորապես, ՀՀ դատախազությունից ակնկալում ենք քաղաքական չեզոքության ու պրոֆեսիոնալիզմի դրսեւորում եւ պատշաճ արձագանք քրեական հանցակազմ պարունակող դեպքերին»:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն
«Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան ՀԿ
«Իրազեկ քաղաքացիների միավորում»
«Համայնքային համախմբման եւ աջակցության կենտրոն» ՀԿ
Հանրային լրագրության ակումբ
«Խաղաղության երկխոսություն» ՀԿ
Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն
Ինֆորմացիայի ազատության կենտրոն
«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ
«Փինք» իրավապաշտպան ՀԿ

2022 ԹՎԱԿԱՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2022թ. Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է 37 612 հանցագործություն՝ 2021թ. 30 245-ի դիմաց. այս մասին Ազգային ժողովում ապրիլի 21-ին՝ ոլեսաիրավական հարցերի խորհրդարանական մշտական հանձնաժողովի նիստին՝ «2022 թվականին Հայաստանի կառավարության (2021-2026թթ.) ծրագրի իրականացման ընթացքի եւ արդյունքների մասին» հաշվետվության քննարկման ժամանակ, ասել է հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը:

Ըստ գլխավոր դատախազի՝ դրանցից 21 604-ը բացահայտվել է Երեւանում: 2021թ. այդ ցուցանիշը 16 438 էր: «Նախորդ տարվա համեմատ՝ 2022թ. հանցագործությունների քանակն ավելացել է 7 367-ով կամ 24,45 տոկոսով»,- նշել է Վարդապետյանը: Ընդ որում՝ 2021թ. համեմատ՝ մանր հանցագործությունների քանակն ավելացել է 2 831-ով կամ 19,35 տոկոսով: 2021թ. այդ ցուցանիշը կազմել է 14 629, իսկ 2022թ.՝ 17 460: Միջին ծանրության գործերով աճը կազմել է 29,85 տոկոս կամ 2 383: 2021թ. այդ ցուցանիշը 7 988 էր, իսկ 2022-ին՝ 10 371: Ծանր հանցագործությունների քանակը 2022թ. կազմել է 14 256. դա 633 դեպքով ավելի է, քան 2021-ին, իսկ առանձնապես ծանրների քանակը՝15 456:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ Է

Հայաստանի կառավարությունը հաստատեց «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ ձեւավորելու որոշումը. հիմնադրամը ներգրավված կլինի Ակադեմիական քաղաք ստեղծելու ծրագրի իրականացման ամբողջ շրջափուլում, այնուհետեւ կիրականացնի Ակադեմիական քաղաքի կառավարումը:

Նախագիծը կառավարության նիստում ներկայացրեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նախարարն ընդգծեց, որ «Կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենքի համաձայն՝ նախատեսված է, որ պետք է ձեւավորվի Ակադեմիական քաղաք, որը կհանդիսանա որակյալ բարձրագույն կրթության եւ հետազոտության համար արդիական կրթական միջավայր: Օրենքի համաձայն՝ Ակադեմիական քաղաքը պետք է ապահովի ուսումնական հաստատությունների, գիտական ու արտադրական կազմակերպությունների միջեւ ցանցային համագործակցության ընդլայնումը:

«Ակադեմիական քաղաքի միջոցով մենք հասցեագրելու ենք նաեւ կրթության ռազմավարությամբ սահմանված մի շարք կարեւորագույն թիրախների ապահովումը, որոնցից են առնվազն 4 բարձրագույն ուսումնական հաստատություն միջազգային վարկանիշային աղյուսակների լավագույն 500-յակի մեջ ունենալը, օտարերկրյա ուսանողների թիվը առնվազն կրկնապատկելը՝ բարձրացնելով բարձրագույն կրթության համակարգի միջազգային հեղինակությունը»,- մանրամասնեց նախարարը:

Ակադեմիական քաղաքը բաղկացած կլինի 3 կլաստերներից, որտեղ տեղակայված կլինեն համապատասխանաբար արվեստների ուղղության համալսարանը, տեխնոլոգիական ուղղվածության համալսարանը, իսկ երրորդ կլաստերը, որը բավական մեծ է, կարող է ընդգրկել ինչպես կրթական, սպայական ուղղվածության բուհերին, այնպես էլ հյուրընկալել միջպետական ու մասնավոր բուհերին: Համապատասխան քաղաքաշինական լուծումների պարագայում կարող է քննարկվել նաեւ ազգային ստադիոնի տեղակայման հարցը: «Նման մեծածավալ ծրագրի իրականացումը պահանջում է իրականացնող կառույցի առկայություն, որը ներգրավված կլինի ծրագրի իրականացման մաբողջ շրջափուլում, այնուհետեւ նաեւ Ակադեմիական քաղաքի կառավարումը կիրականացնի, որովհետեւ ստեղծված ենթակառուցվածքները նախատեսելու են նաեւ վարչարարության ու կառավարման մի ամբողջ համակարգ: Այս որոշմամբ մենք հիմնադրում ենք «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը, որը կազմակերպելու, համակարգելու եւ վերահսկելու է Ակադեմիական քաղաքի ստեղծման աշխատանքները: Նախնական փուլում հիմնադրամին են ամրացվելու Ակադեմիական քաղաքի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքները: Մեկ ամսվա ընթացքում մենք պետք է ներկայացնենք այն գույքի ցանկը, որը պետք է հատկացվի Ակադեմիական քաղաքի համար, իսկ հետո կառավարության առանձին որոշումներով հողատարածքները անհատույց կտրամադրվեն ձեւավորվելիք հիմնադրամին: Անդրեասյանն ընդգծեց, որ այս որոշմամբ Ակադեմիական քաղաքի ստեղծման ծրագիրը տեղափոխում են գործնական փուլ, որին հաջորդելու է հայեցակարգային աշխատանքների փուլը, ինչի ընթացքում կվերջնականացվեն Ակադեմիական քաղաքում տեղակայվող գիտահետազոտական ինստիտուտների եւ բուհերի կառուցվածքն ու կառավարման ձեւերը»,- եզրափակեց Անդրեասյանը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանն էլ ընդգծեց, որ արդեն կողմնորոշվել են Ակադեմիական քաղաքի տեղադիրքի հարցում: Ակադեմիական քաղաքը տեղակայվելու է Երեւան քաղաքի, Կոտայքի, Արագածոտնի եւ Արմավիրի մարզերի հատման կետում:

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ԲԱՑՎԵՑ Հ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Հայաստանի ազգային պատկերասրահում ապրիլի 20-ին բացվեց Հայաստանի ժողովրդական նկարիչ Հրանտ Թադեւոսյանի 85-ամյակին նվիրված ցուցահանդեսը: Ցուցահանդեսն ընդգրկում է 53 ստեղծագործություն՝ տարբեր տարիներին վրձնած բնանկարներ, նատյուրմորտներ, կանանց դիմանկարներ եւ վերացական պատկերներ: «Ստեղծագործություններով ուզում եմ մարդկանց կապել բնությանը, ուզում եմ՝ մարդիկ բարի լինեն: Իմ ամբողջ արվեստը քարոզում է մարդասիրություն ու մարդաբանություն, բնության հանդեպ ունեցած մարդկային վերաբերմունք»,- ասաց Թադեւոսյանը: Նկարչի խոսքով՝ իր 6000 աշխատանքից 53-ն են տեղ գտել ցուցասրահում:

Ցուցադրված են ուսանողական տարիների աշխատանքներից մինչեւ բնանկարներ եւ սյուժետային աշխատանքներ, նատյուրմորտներ: Նրա համոզմամբ՝ այցելուները իր նկարներին նայելիս կհասկանան բոլոր ժամանակների շունչը: «Ես մարդու համար եմ նկարում, ուզում եմ, որ մարդը նայի իմ նկարներին եւ զգա պահը, որում ինքն ապրել է: Երբ կողքից հետեւում եմ, նկատում եմ, որ նկարը նայում են, ու մի թեթեւ ժպիտ է հայտնվում այցելուների դեմքին. նշանակում է՝ ես կատարել եմ մի բան, որը հաճելի ու ընկալելի է»,- ընդգծեց նկարիչը: Թադեւոսյանը խոստովանեց՝ իր աշխատանքները շատ երկրներում են ցուցադրվել, եւ բոլորն էլ նկատել են, որ արեւոտ երկրի ստեղծագործություններ են: «Նկարչությունն այնպիսի բան է, որ նայողն անմիջապես ընկալում եւ հասկանում է՝ ստեղծագործությունն անկեղծ է, թե ոչ: Կարեւոր է, որ ստեղծագործողը իր հոգում եղածը դուրս բերի: Ես ուզում եմ, որ հայ ստեղծագործողի աշխատանքը նայելիս հասկանանք, որ սա Հայաստան աշխարհի աշխատանք է»,- եզրափակեց նա: Նկարչի ստեղծագործություններում ակնհայտ է բնության հետ կապն ու արտաքին աշխարհը յուրովի մեկնաբանելու ձգտումը: Նրա արվեստին ներհատուկ է գույների վառ, ազատ ու անկաշկանդ ընտրությունը: Արվեստագետի ստեղծագործական ողջ ժառանգությունը ներկայացնում է մարդու եւ բնության սերտ փոխհարաբերությունը: Հրանտ Թադեւոսյանը Հայաստանի նկարիչների միության, Արվեստի միջազգային ընկերության եւ Պրոֆեսիոնալ նկարիչների միության (ՅՈՒՆԵՍԿՕ) անդամ է:

ԼՈՒՐԵՐ

Louis Vuitton–Ի ՆՈՐ ԴԵՍՊԱՆԸ

Ջենդայան Louis Vuitton-ի նոր դեսպանն է: Ֆրանսիական նորաձեւության տունը ներկայացրել է իր առաջին արշավը, որում ներկայացված է «Ոսկե գլոբուսի» դափնեկիր, «Էյֆորիա» ժապավենի աստղին իրենց խորհրդանշական Capucines պայուսակի կողքին:

Լուսանկարիչներ Մյորթ Ալասի եւ Մարկուս Պիգգոտի դուետի ոսպնյակում Ջենդայան հայտնվել է E-1027-ի՝ Roquebrune-Cap-Martin տան առաջին պլանում, որը նախագծվել է ականավոր մոդեռնիստ ճարտարապետ եւ արդյունաբերական դիզայներ Էյլին Գրեյի կողմից: Լոու Ռոուչեմի կողմից ստեղծված հավաքածուին Ջենդայան պարտական է իր նորաձեւության նորարարական զգացողության համար, քանզի արշավը ցուցադրում է աստղին մի շարք Capucines-ով: Դրանց թվում է Capucines BB փոքր մոդելը:

2021 թվականին CFDA Fashion Ոձon մրցանակի դափնեկիր Ջենդայան ամենաբարձր մակարդակի նորաձեւության «օրենսդիրներից» մեկն է: Հատկանշական է, որ նա նստել է առաջին շարքում Louis Vuitton-ի կանանց աշուն/ձմեռ 2023 շոուին մարտին:

Capucines պայուսակը, որը թողարկվել է 2013 թվականին, իր անունը ստացել է Rue Neuve-des-Capucines փողոցից կամ այն փողոցից, որտեղ Louis Vuitton-ը 1854 թվականին կտրել է առաջին ցուցափեղկի ժապավենը: Այժմ այս աքսեսուարն ապրանքանիշի ամենաճանաչելի ստեղծագործություններից է:

ՄԵՐԿԱՑԵԼ Է Maxim–Ի ՀԱՄԱՐ

Էշլի Գրեմը մերկացել է Maxim-ի մայիս/հունիս 2023 շապիկի համար՝ դեբյուտային այս շաբաթ:

Սա մեծ փոփոխություն է տղամարդկանց ամսագրի համար, որտեղ հաճախ են ներկայացվել այնպիսի երիտասարդ աստղեր, ինչպիսին Մելիսա Ջոան Հարթն է 1999թ.-ին, երբ նա ընդամենը 22 տարեկան էր: Ըստ երեւույթին, Maxim-ը փոխվում է՝ բավարարելու ժամանակի պահանջները, քանի որ ամսագրերն ավելի ընդգրկուն են դառնում: Այնուամենայնիվ, Էշլիի համար սա Maxim-ի առաջին շապիկը չէ. 2016 թվականին լուսանկարում նա սավանը սեղմել էր մերկ կրծքին:

Սա աշխարհի Hot 100 ամենասեքսուալ կանանց ամսագրի շապիկն է, իսկ 35-ամյա Գրեմը զբաղեցրել է առաջին տեղը: «Էշլի Գրեմը Maxim Hot 100 2023թ.-ի շապիկի աստղն է»,- գրել է Մաքսիմն իր Instagram-ում: «Փարթամ բարեմասնությունների թագուհին նույնքան շքեղ է, որքան ոգեշնչող՝ անկախ նրանից, նա գլամուրային ֆոտոշարքերի համար է նկարահանվում որպես աշխարհի ամենասեքսուալ կին, թե հայտնվում է կարմիր գորգի վրա»:

● *Ապրիլի 23-ին «Մեցցո» ակումբում տեղի կունենա Another Story Band միջոցառումը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Ռիմա Հարությունյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմողի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին: Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտնում ենք, որ ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կարող են արդյոք պետության կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը տրամադրվել կառուցապատման իրավունքով: Եվ ուզում եմ իմանալ, թե ինչպես կարող է տնօրինվել հողամասի կառուցապատման իրավունքը:

Սարգիս Մնացականյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերը կառուցապատման իրավունքով տրամադրվում են միայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերից: Կառուցապատման իրավունք ունեցող անձը կարող է այդ իրավունքը տնօրինել՝ փոխանցել այլ անձի, ազատորեն օտարել, գրավ դնել այն, ինչպես նաեւ կատարել այլ գործարքներ կառուցապատման իրավունքի նկատմամբ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2041-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կառուցապատման իրավունքը անձի իրավունքն է այլ անձի պատկանող հողամասում քաղաքաշինական նորմերի ու կանոնների, ինչպես նաեւ հողամասի նշանակության վերաբերյալ պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով կառուցել շենքեր եւ շինություններ, դրանք վերակառուցել կամ քանդել եւ կառուցապատման իրավունքի գործողության ժամկետի ընթացքում տիրապետել եւ օգտագործել այդ գույքը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Գերմանացի դերասան Թիլ Շվայգերը, որն առավել հայտնի է «Բախելով երկնքի դռները»/Knockin' on Heaven's Door/ ֆիլմից, այս շրջանում Հայաստանում է: Դերասանը ժամանել է Արման Նշանյանի հրավերով: Շվայգերը Երեւանում հանդիպել է հայազգի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Արթուր Աբրահամի հետ: Արթուրն ինստագրամյան իր էջում գերմանացի աստղի հետ հանդիպումից լուսանկարներ ու տեսանյութեր է հրապարակել՝ փաստելով, որ Շվայգերը շատ է հավանել Հայաստանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+3 +7 +10 +14		Արարատ	+10 +13 +19 +21	
Կոտայքի լեռներ	+4 +6 +10 +13		Արմավիր	+10 +13 +18 +20	
Կոտայքի նախալեռներ	+8 +10 +14 +16		Վայոց ձորի լեռներ	+4 +6 +8 +10	
Գեղարքունիք	+3 +7 +10 +13		Վայոց ձորի նախալեռներ	+10 +13 +23 +26	
Լոռի	+6 +9 +14 +18		Սյունիքի հովիտներ	+10 +13 +16 +19	
Տավուշ	+8 +12 +15 +18		Սյունիքի նախալեռներ	+5 +10 +19 +24	
Արագածոտնի լեռներ	+4 +6 +9 +12		Արցախ	+6 +10 +12 +15	
Արագածոտնի նախալեռներ	+7 +11 +14 +18		Երեւան	+10 +12 +17 +19	

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*